ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Առաքելյանը, Արուս Արզումանյանը, Լենդրուշ Արշակյանը, Քրիստինե Մանուկյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Գևորգ Մուրադյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտաշես Ղարիբյանը, Սևակ Գաբրիելյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, Զոհրակ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, աշխատակազմի եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետ Կարինե Սարոյանը, աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության, հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Արազ Հակոբյանը, քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Մովսեսյանը, աշխատակազմի զարգացման ծրագրերի և զբոսաշրջության բաժնի պետ Հայկ Սարգսյանը, աշխատակազմի գնումների բաժնի պետ Միեր Պապյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

2) Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը հաստատելու մասին.

3) Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 21-ի N 223-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու և համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 265-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու,համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 266-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 267-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

7) Նաիրի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին.

9)Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

10) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությամբ օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին.

11) <<Պռոշյանի մսուր-մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին.

12) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Արագյուղի <<Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերությունը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին.

13) <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխության մասին.

14) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը դադարեցնելու և փոխհատուցում տրամադրելու մասին.

15) Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան շենքի կառուցման համար նախնական համաձայնություն տալու մասին.

16) Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման համար նախնական համաձայնություն տալու մասին.

17) Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման համար նախնական համաձայնություն տալու մասին.

18) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

19) Նաիրի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել -1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 235-Ա/

2.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Նաիրի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 236-Ա/

3.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի, և հիմք ընդունելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4 հոդվածի 1-ին մասը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թվականների տեղական պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 237-Ա/

4.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է

1. Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 21-ի «Նաիրի համայնքի 2025 թվականի սուբվենցիոն ծրագրային հայտերին հավանություն տալու մասին» N 223-Ա որոշման ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն ցանկի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 238-Ա/

5.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 265-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 546000 (հինգ հարյուր քառասունվեց հազար) դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին>> N 265-Ա որոշումը:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 239-Ա/

6.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 266-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի,<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 27-րդ հոդվածի <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել Նաիրի համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

4. Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 266-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ որոշման 2-րդ կետով հաստատված հաստիքացուցակի համայնքային ծառայության նոր պաշտոնների, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 240-Ա/

7.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 267-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածներ 1-16-ի:

2.Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 267-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 241-Ա/

8.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջները՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Նաիրի համայնքի 2025 թվականի համար տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Սահմանել Նաիրի համայնքի 2025 թվականի համար տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 242-Ն/

9.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32 հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեն:

2. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված N 1-ի:

3. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված N 2-ի:

4. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված N 3-ի:

5. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված N 4-ի:

6. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված N 5-ի:

7. Հաստատել համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:

8. Համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող հնարավոր վերաբաշխումների չափաքանակը սահմանել 2025 թվականի բյուջեի ընդհանուր ծավալի 20 %-ի չափով:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 243-Ն/

10.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Եղվարդի <<AV>> թատրոն-ստուդիայի համահիմնադիր Վիգեն Թադևոսյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1. Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից <<AV>> թատրոն- ստուդիային ֆինանսավորելու նպատակով Նաիրի համայնքի բյուջեի <<Մշակութային միջոցառումներ>> ծրագրի 4637 հոդվածին հատկացնել 500.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-3

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 244-Ա/

11.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մեկ տարվա ընթացքում, համայնքի կապիտալ ծախսերի բավարարման նպատակով հրապարակային սակարկությամբ օտարելու վերաբերյալ և սահմանել նրանց մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 245-Ա/

12.Լսեցին

<<ՊՈՌՇՅԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագնին որոշում է.

1. Հիմնադրել «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

2. Հաստատել «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 246-Ա/

13.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՐԱԳՅՈՒՂԻ <<ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԿՐԹԱՐԱՆ>> ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/06/08302-2024 գրությունը՝ Նաիրի համայնքի ավագնին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնք, գյուղ Արագյուղ, 1-ին փողոց, թիվ 21 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գույքը (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական N 2701722) 3 (երեք) տարի ժամկետով, դպրոցի ուսումնական գործընթացն իրականացնելու նպատակով անհատույց օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արագյուղի «Տիգրանակերտ կրթարան» միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (ՀՎՀՀ 03305373) մինչև դպրոցի շենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-17 Դեմ-2 Ձեռնպահ-1

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 247-Ա/

14.Լսեցին

<<ԲՈՒԺԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ և 64-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 15-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել (վերակազմավորել) որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 248-Ա/

15.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Քասախի գյուղական խորհրդի գործկոմի 1996 թվականի մայիսի 25-ի պայմանագրով նախատեսված դրույթները և Արմեն Խոսրովի Ղազարյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Արմեն Խոսրովի Ղազարյանին վարձակալությամբ տրամադրված 135քմ տարածքը վերադարձնել Նաիրիի համայնքապետարանի տնօրինության տակ:

2.Մերժել տարածքի բարեկարգման աշխատանքներ կատարելու համար Արմեն Խոսրովի Ղազարյանին դրամական փոխհատուցում տրամադրելու խնդրանքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-2

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 249-Ա/

16.Լսեցին

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հիմք ընդունելով ժիրայր Մարտիրոսյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն՝ Նաիրի համայնք, գյուղ Պռոշյան, Գ. Չաուշի խճուղի, 95 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով ժիրայր Մարտիրոսյանին պատկանող 07-053-0379-0106 կադաստրային ծածկագրի 1,2168 հա մակերեսով հողամասում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան շենքի կառուցման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 250-Ա/

17.Լսեցին

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն՝ Նաիրի համայնք, գյուղ Պռոշյան, Գ. Չաուշի խճուղի, 5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրի 19,3619 հա մակերեսով հողամասում Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 251-Ա/

18.Լսեցին

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հիմք ընդունելով Լևոն Արսենի Օհանյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն՝ Նաիրի համայնք, գյուղ Պռոշյան, Գ. Չաուշի խճուղի 1/21 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Լևոն Արսենի Օհանյանին պատկանող 07-053-0385-0031 կադաստրային ծածկագրի 1,60177 հա մակերեսով հողամասում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 252-Ա/

19.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Վազգեն Սմբատյանի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Վազգեն Սմբատյանին և Գոհար Սիմոնյանին պատկանող 07-065-0280-0003 կադաստրային ծածկագրի 0,379 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,1 հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման տնտեսություն և պահակակետ կառուցելու նպատակով:

2.Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 253-Ա/

20.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Նաիրի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Նաիրի համայքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի փետրվարի 11-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 254-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԽԱՉԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼԻԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԽՈՍՐՈՎ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՈՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը_____

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 25-ի
N 236-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2025 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները 3

Համայնքի 2025թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների) 8

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների 13

Համայնքային գույքի կառավարման 2025թ. ծրագիրը 37

Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը 42

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի եվ գնահատման պլանը 45

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, որտեղ հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Նաիրի համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
-սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
-համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
-շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
-որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցառումները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման պլանը:

Նաիրի համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում են համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում են համայնքի 2025 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2025 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի գնահատման պլանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի տեսլականը՝

Նաիրի համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Հ/Հ	**Ցուցանիշները**	**Ելակետային արժեք**	**Թիրախային արժեք**
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	18%	18%
2.	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տարեկան կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	48,7%	60%
3.	Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	40226	40226

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	**Վերջնական արդյունքի՝**		
	Ցուցանիշ	**Ելակետային արժեք**	**Թիրախային արժեք**
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ Ապահովել տեղական ինքնակառավարումը Նաիրի համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	82%	95%

համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ	ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	83%	85%
	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	93%	95%
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում Աջակցել համայնքում իրականացվող պաշտպանության ոլորտի ծրագրերին	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ	այո	այո
	Զորակոչիկների բավարավածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), %	80	100
Ոլորտ 3. Հասարական կարգի, անվտանգության և դատական պաշտպանության կազմակերպում Աջակցել համայնքում իրականացվող արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական պաշտպանության և դատական ոլորտի ծրագրերին	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումներից այո/ոչ	այո	այո
	Համայնքի բնակչության պաշտպանվածությունը բնական աղետներից	60	80
Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	75	80
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման համակարգի սպասարկման,	80	80

	շահագործման և պահպանման ծառայությունից: , %		
Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից: , %	80	90
Ոլորտ 6" Կոմունալ տնտեսություն, արտաքին լուսավորություն և ջրամատակարարում Կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը ունենալ, կանաչապատ, բարեկարգ և լուսավոր համայնք	Համայնքում կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը ընդհանուր մակերեսի մեջ %	35	40
	Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ %	75	80
	Համայնքում խմելու ջրագծով ապահոված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը տարածքների ընդհանուր մակերեսի մեջ %	60	70
Ոլորտ 7. Առողջապահություն 2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 8. Հանգիստ մշակույթ կրոն Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, աջակցել մշակութային նախաձեռնությունների իրականացմանը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը	Տարվա ընթացքում գրադարանից օգտվող բնակիչների թվի տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ %	8,3	52

	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	85	80
	Հոգեհանգստի ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին	90	95
Ոլորտ 9. Կրթության կազմակերպում Ապահովել համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում և որակյալ ծառայությունների մատուցումը	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին %	80	85
	Մատուցվող արտադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին %	85	85
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	45	52
Ոլորտ 10. Սոցիալական պաշտպանություն	Սոցիալական ծրագրի առկայություն այո/ոչ	Այո	Այո

Օգնել համայնքի կարիքավոր, վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, սոցիալապես անապահով ուսանողներին և հասարակական կազմակերպություններին բարելավելու նրանց սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը մատուցված ծառայությունից %	90	95

ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը. որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ			
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մատուցում	623794,9	Ընդհանուր համայնքային
2.	Տրանսպորտային. վարչական և այլ սարքավորումների ձեռք բերում	25000,0	Ընդհանուր համայնքային

3.	Նախագծային փաստաթղթերի ձեռքբերում	60000,0	Ընդհանուր համայնքային
4.	Շենք - շինությունների կառուցում և վերանորոգում	1295587,0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**2004381,9**	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	քաղաքացիական և այլ պաշտպանություն	10000,0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		**10000,0**	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Պաշտպանվածություն բնական աղետներից	10000.0	Ընդհանուր համայնքային
2.	Փրկարար և դատական գործունեության իրականացում	1000.0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		**11000.0**	-
Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ			
1.	Ներհամայնքային ճանապարհների կառուցում և վերանորոգման աշխատանքների իրականացում	2918035,455	Ընդհանուր համայնքում
2.	Ոռոգման համակարգի պահպանություն	195000,0	Ընդհանուր համայնքում
3.	Գազաֆիկացում	130000,0	Ընդհանուր համայնքում
4.	Գյուղատնտեսություն	2000,0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**3245035,455**	
Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն			
1.	Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	244900,0	Ընդհանուր համայնքում
2.	Կոյուղագծերի կառուցում և պահպանություն	245000,0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**489900,0**	
Ոլորտ 6. Կոմունալ տնտեսություն			
1.	Բարեկարգման և կանաչապատման իրականացում	108220,0	Ընդհանուր համայնքում
2	Արտաքին լուսավորության անցկացում և ընդլայնում	205850,0	Ընդհանուր համայնքում
3.	Խմելու ջրագծի կառուցում,	87000,0	Ընդհանուր

	վերանորոգում և պահպանում		համայնքում
Ընդամենը		**401070,0**	
Ոլորտ7. Առևտուր			
	2025 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Հանգիստ մշակույթ կրոն			
1.	Գրադարանների գործունեության և գրքային ֆոնդի ապահովում	27150,0	Ընդհանուր համայնքում
2.	Այլ մշակության միջոցառուների իրականացում	106912,0	Ընդհանուր համայնքում
3.	Մշակույթի տների. կենտրոնների պահպանություն	14500,0	Ընդհանուր համայնքում
4.	Մշակութային օբյեկտների և շրջակա տարածքների բարեկարգում	1045000,0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**1193562,0**	
Ոլորտ 9. Կրթության կազմակերպում			
1.	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	613670,6	Ընդհանուր համայնքում
2.	Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում	269442,0	Ընդհանուր համայնքում
3.	Նախակրթարանների ֆինանսավորում	1800,0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**884912,6**	
Ոլորտ 10.Սոցիալական պաշտպանություն			
Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին		94500	Ընդհանուր համայնքում
Ընդհամենը		**94500**	
Պահուստային ֆոնդ		**160000,0**	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը. որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Պարտք 2023թ-ից (հազար դրամ)	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
	Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն			
1.	Շենք - շինությունների կառուցում և վերանորոգում	0	0	Ընդհանուր համայնքում

Ընդամենը		**0**	**0**	
	Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ			
1.	Ոռոգման ցանցի կառուցում	0	0	Ընդհանուր համայնքում
2.	Ճանապարհային տրանսպորտ	0	0	Ընդհանուր համայնքում
3.	Գազամատակարարում	0	0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**0**	**0**	
	Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Կոյուղագծերի կառուցում	0	0	Ընդհանուր համայնքում
Ընդամենը		**0**	**0**	
	Ոլորտ 6 . Կոմունալ տնտեսություն			
1.	Լուսավորության անցկացում	0	0	Ընդհանուր համայնքում
2.	Խմելու ջրագծի կառուցում	0	0	Ընդհանուր համայնքում
Ընամենը		**0**	**0**	
	Ոլորտ 8. Մշակույթ. հանգիստ. կրոն			
1.	Մշակութային օբյեկտների կառուցում	0	0	
Ընդամենը		**0**		
Ընդամենը		**0**	**0**	

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 92% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ 5% ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 51,8% ✓ ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 80%			
Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքի աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** 1.Համայնքի աշխատակազմի աշխատողների	Աշխատակազմ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի	2025թ. հունվար–դեկտեմբ	Համապատասխան մարդկային և

աշխատակազմի բնականոն գործունեությունը	թիվը, 133 2. Համայնքի ենթակայության կազմակերպությունների թիվը, 15 3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, 5% 4. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 253 օր 5. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը, այո 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 4 %-ով 7. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը՝ 85% 8. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 7 օր		քաղաքացիական, վարչական ղեկավարներ	ել	ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)
1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների կատարում 3. Համայնքապետարանի և Զովունի, Զորավան, Արագյուղ, Սարալանջ, Բուժական, Քասախ, Պռոշյան բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգման, նոր գույքի ձեռք բերման աշխատանքների իրականացում	1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 623794,9 հազ. դրամ 2. Համայնքի աշխատակազմի աշխատողներ՝ 133 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5. Վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքեր և գույք 6. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը՝ 85 7. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ http://yeghvard.am 8. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 2

Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում	
Ոլորտային նպատակ **Քաղաքացիական և այլ պաշտպանությունների կազմակերպում**	**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Համայնքի բնակիչների համար քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 10 % ✓ Համայնքի բնակիչների համար այլ պաշտպանության ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 8 %

Ծրագիր 1 Նաիրի համայնքում քաղաքացիական և այլ պաշտպանությունների իրականացում					
Ծրագրի նպատակ Բարելավել բնակչությանը մատուցվող քաղաքացիական և այլ պաշտպանության ծառայությունների որակը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Մատուցվող քաղաքացիական և այլ պաշտպանության ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 80 %	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է քաղ. պաշտպանության բնականոն գործունեությունը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի	Աշխատակազմ		2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 1. քաղաքացիական և այլ պաշտպանությունների իրականացում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ 11000,0			
Ոլորտ 3. Հասարակական կարգի, անվտանգության և դատական պաշտպանության կազմակերպում					

Ոլորտային նպատակ Փրկարար և դատական գործունեության իրականացում	**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Համայնքի բնակիչների համար փրկարար ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 7% ✓ Համայնքի բնակիչների համար դատական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 7%

Ծրագիր 1. Նաիրի համայնքում փրկարար և դատական ծառայությունների իրականացում					
Ծրագրի նպատակ Ապահովել փրկարար և դատական գործունեության իրականացում	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Մատուցվող փրկարար և դատական ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 60%	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք Ապահովվել է դատական պաշտպանության բնականոն գործունեությունը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի	Աշխատակազմ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ ✓ Փրկարար և դատական գործունեության իրականացում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 11000.0 հազար դրամ			

Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ	
Ոլորտային նպատակ Բարելավել ներհամայնքային ճանապարհային տնտեսության վիճակը	**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, 26 .5կմ ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների կառուցման տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, 44%

Ծրագիր 1. Նաիրի համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում

Ծրագրի նպատակ Ապահովել ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը, լավ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունից, 53%	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք Բարեկարգվել են ներհամայնքային ճանապարհները	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Բարեկարգ միջբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 35 %	Աշխատակազմ <<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>>ՀՈԱԿ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ ✓ Նաիրի համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքների իրականացում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 1931827,449 հազար դրամ ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը՝ 3 ✓ Համայնքապետարանից ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը, 3			
Ծրագիր 2. Նաիրի համայնքում ոռոգման համակարգի պահպանություն					
Ծրագրի նպատակ Ապահովել ոռոգման համակարգի շահագործման	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Ոռոգման համակարգի սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը, լավ	Ծրագրի գնահատման համակարգ,			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների

	• Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման համակարգի սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունից, 65%		Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2023թ. հունվար-դեկտեմբեր	առկայություն
Միջանկյալ արդյունք Բարեկարգվել են ոռոգման համակարգի ցանցերի վիճակը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Ոռոգված տարածքների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 30 % ✓ Համայնքում առկա ոռոգման ցանց՝ 51.5 կմ ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի	Աշխատակազմ <<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>>ՀՈԱԿ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ ✓ Նաիրի համայնքի ոռոգման համակարգերի կառուցում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 70141,364 հազար դրամ ✓ Ոռոգման համակարգերի բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը՝ 1 ✓ Համայնքապետարանից ոռոգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը, 1			
Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն					
Ոլորտային նպատակ Համայնքում աղբահանության կազմակերպում և կոյուղագծերի անցկացում		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), 35% ✓ Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, 95%			
Ծրագիր 1. Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Համայնքի բնակավայրերը դարձնել մաքուր և բարեկարգ	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն, այո	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջանցքային արդյունք	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Աշխատանքային	Պատասխանատու,		
Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն	✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 59 ✓ Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 5 օր ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսը, 124000 քմ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից, 90 %	<<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>>ՀՈԱԿ	բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ (գործողություններ)	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)
✓ Համայնքի բոլոր բնակավայրերում կանոնավոր աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում	✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 244900,0 Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝59 ✓ Աղբահանության համար գանձվող վճարի չափը, 200 ՀՀ դրամ 1 անձը ✓ Ձյան մաքրման մեքենաների թիվը 8 ✓ Աղբատար մեքենաների թիվը 8 ✓ Աղբամանների թիվը՝857

Ոլորտ 6. Կոմունալ տնտեսություն, արտաքին լուսավորության անցկացում և ջրամատակարարում	
Ոլորտային նպատակ	**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**
Ապահովել Նաիրի համայնքը կանաչապատ տարածքներով և բարեկարգ բակերով, արտաքին լուսավորված փողոցներով	✓ Համայնքում կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը ընդհանուր մակերեսի մեջ, 30% ✓ Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, 80%

Ծրագիր 1. Զովունի բնակավայրի երաժշտական դպրոցին կից մասնաշենքի կառուցում:

Ծրագրի նպատակ Ապահովել Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գործող երաժշտական դպրոցին կից նոր մասնաշենքի կառուցում:	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Համայնքում գործող երաժշտական դպրոց՝ ժամանակակից ստանդարտներին համապատասխան և ավելի մեծ թվով սաների քանակով:	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, Զովունի բնակավայրի վարչական ղեկավար	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք Կիրականացվի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գործող երաժշտական դպրոցին կիր նոր մասնաշենքի կառուցում:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Երաժշտական դպրոցի կարգավիճակը՝ լավ	Զովունի բնակավայրի վարչական ղեկավար, Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի երաժշտական դպրոցին կից մասնաշենքի կառուցման աշխատանքների իրականացում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, *226 917 860* դրամ			
Ծրագիր 2. Զովունի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում և Քասախ բնակավայրի մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատաքներ					
Ծրագրի նպատակ ✓ Ապահովել Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում: ✓ Ապահովել Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Զովունի բնակավայրի գործող մանկապարտեզի կարգավիճակը՝ լավ: ✓ Նոր մասնաշենքի կառուցման արդյունքում կապահովվի նոր խմբերի քանակ՝ հնարավորություն տալով ավելի մեծ թվով երեխաների մանկապարտեզ հաճախելու գործընթացը: ✓ Քասախ բնակավայրի գործող մանկապարտեզի վիճակը՝ լավ:	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, Զովունի վարչական շրջանի ղեկավար, Քասախ վարչական	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ:	• Բակի բարեկարգումը հանրակրթություն կտա մանկապարտեզ հաճախող երեքաներին ունենալ նոր, հարմարավետ և ժամանակակից ստանդարտներին համապատասխան խաղահրապարակ և բարեկարգ, կանաչապատ այգի:		շրջանի ղեկավար		
Միջանկյալ արդյունք Կիրականցվեն Զովունի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման և Քասախ բնակավայրի մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Բարեկարգ մանկապարտեզ՝ նոր և հարմարավետ խմբեր: ✓ Բարեկարգ մանկապարտեզի բակ՝ անվտանգության ժամանակակից ստանդարտներին համապատասխան:	Աշխատակազմ, Զովունի վարչական շրջանի ղեկավար, Քասախ բնակավայրի վարչական ղեկավար			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Զովունի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում: ✓ Քասախ բնակավայրի մանկապարտեզի բակի բարեկարգում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, 290 728 548 դրամ			
Ծրագիր 3. Եղվարդ քաղաքի, Պռոշյան, Քասախ, Բուժական, Արագյուղ, Սարալանջ բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ					
Ծրագրի նպատակ ✓ Ապահովել Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի, Պռոշյան Քասախ, Բուժական, Արագյուղ, Սարալանջ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորվածությ	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, 87%	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավար	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

ու�:					
Միջանկյալ արդյունք Կիրականացվեն Եղվարդ, Պառոշյան, Քասախ, Բուժական, Արագյուղ, Սարալանջ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի ապահովումը:	**Եղքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 52 կմ ✓ Երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացում, այո ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 5ժամ ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ	Աշխատակազմ <<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>>ՀՈԱԿ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ ✓ Եղվարդ բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն ✓ Բուժական բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն ✓ Արագյուղ բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն ✓ Սարալանջ բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն ✓ Քասախ բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն ✓ Պառոշյան բնակավայրի գլխավոր փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ. 60 452 144 դրամ			
Ծրագիր 4. Բուժական բնակավայրի մշակույթի տան վերանորոգում					

Ծրագրի նպատակ ✓ Բուժական բնակավայրի մշակույթի տան վերանորոգում	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Բուժական բնակավայրի մշակույթի տան վերանորոգում՝ ժամանակակցի ստանդարտներին համապատասխան:	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, Բուժական վարչական շրջանի ղեկավար	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք ✓ Կիրականացվեն Բուժական բնակավայրի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ մշակութային խմբակների գործունեության ապահովմանը, արտադպրոցական մշակութային և երաժշտական նախնական մասնագիտական կրթության ստացմանը՝ ապահովելով երեխաների գեղագիտական դաստիարակությունը: ✓ հավելյալ հաստիքներ՝ ապահովելով մի շարք խմբակների գործունեության իրականացումը և մասնագետների աշխատանքով ապահովմանը	Աշխատակազմ, Բուժական վարչական շրջանի ղեկավար			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ	**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**
✓ Նաիրի համայնքի Բուժական բնակավայրում մշակույթի տան շենքի վերանորոգում: ✓ Տարածքի բարեկարգում, կանաչապատում ✓ Գույքի ապահովում:	✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, 28 934 854 դրամ

Ծրագիր 5. Եղվարդ քաղաքի, Քասախ, Պռոշյան և Արագյուղ բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ

✓ **Ծրագրի նպատակ** ✓ Ապահովել Նաիրի համայնքի Եղվարդ	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Համայնքում գազի ցանցով ապահոված	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական

քաղաքի, Քասախ, Պռոշյան և Արագյուղ բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ:	տարածքների ընդհանուր մակերեսի մեջ՝ 73%		ղեկավար	2025թ. հունվար-դեկտեմբեր	առկայություն
4548	- այլ		0.000		
4600	*1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, այդ թվում՝*	x	96000.000	96000.000	X
4610	*ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ, այդ թվում՝*		0.000	0.000	X
4610	- Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության	4711	0.000		X
4620	- Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին	4712	0.000		X
4630	*ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ),*	x	96000.000	96000.000	X
4631	-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	8000.000	8000.000	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	3000.000	3000.000	X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	0.000		X
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	85000.000	85000.000	X
4640	*ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, որից՝*	x	0.000	0.000	X
4641	-Կենսաթոշակներ	4741	0.000		X
4700	*1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝*	x	186500.000	186500.000	
4710	*ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,*	x	1000.000	1000.000	X
4711	- Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություններ	4811	0.000		X
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1000.000	1000.000	X
4720	*ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ*	x+C88	15500.000	15500.000	X
4721	-Աշխատավարձի ֆոնդ	4821	0.000		X
4722	-Այլ հարկեր	4822	0.000	0.000	X
4723	-Պարտադիր վճարներ	4823	15500.000	15500.000	X
4724	-Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր	4824	0.000		X
4730	*ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ, որից՝*	x	0.000	0.000	X
4731	-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831	0.000		X
4740	*ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, որից՝*	x	10000.000	10000.000	X
4741	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4841	10000.000	10000.000	X
4742	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	4842	0.000		X

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4750	*ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, որից*	x	0.000	0.000	X
4751	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4851	0.000		X
4760	*ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, որից՝*	x	0.000	0.000	X
4761	-Այլ ծախսեր	4861	0.000		X
4770	*ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ, որից՝*	x	160000.000	160000.000	0.000
4771	-Պահուստային միջոցներ, այդ թվում՝	4891	160000.000	160000.000	
4772	համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	0.000		
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	x	6119622.455	X	6119622.455
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝	x	6119622.455	X	6119622.455
5110	*ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որից՝*	x	6017622.455		6017622.455
5111	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	0.000	X	
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1985969.000	X	1985969.000
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4031653.455	X	4031653.455
5120	*ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, որից՝*	x	42000.000		42000.000
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	0.000	X	0.000
5122	- Վարչական սարքավորումներ	5122	25000.000	X	25000.000
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	17000.000	X	17000.000
5130	*ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, որից՝*	x	60000.000		60000.000
5131	-Աճեցվող ակտիվներ	5131	0.000	X	0.000
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	0.000	X	0.000
5133	- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	5133	0.000		0.000
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	60000.000		60000.000
5200	*1.2 ՊԱՇԱՐՆԵՐ, այդ թվում՝*	x	0.000	X	0.000
5211	- Համայնքային նշանակության ռազմավարական պաշարներ	5211	0.000	X	
5221	- Նյութեր և պարագաներ	5221	0.000	X	0.000
5231	- Վերավաճառքի համար նախատեսված	5231	0.000	X	
5241	-Սպառման նպատակով պահվող պաշարներ	5241	0.000	X	
5300	*1.3 ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ, այդ թվում՝*	x	0.000	X	0.000
5311	-Բարձրարժեք ակտիվներ	5311	0.000	X	
5400	*1.4 ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ, այդ թվում՝*	x	0.000	X	0.000
5411	-Հող	5411	0.000	X	
5421	-Ընդերքային ակտիվներ	5421	0.000	X	
5431	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0.000	X	
5441	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	5441	0.000	X	
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝	x	-3806700.000	X	-3806700.000
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝	x	0.000	X	0.000
6110	*ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8111	0.000		
6120	*ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8121	0.000		
6130	*ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8131	0.000	X	0.000
6200	ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝	x	0.000	X	0.000
6210	*ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8211	0.000	X	
6220	*ԱՅԼ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ,*	x	0.000	X	0.000
6221	- Արտադրական պաշարների իրացումից	8221	0.000		

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
6222	- Վերավաճառքի համար ապրանքների իրացումից մուտքեր	8222	0.000	X	
6223	- Սպառման համար նախատեսված պաշարների իրացումից մուտքեր	8223	0.000	X	
6300	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝	x	0.000	X	0.000
6310	*ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8311	0.000	X	
6400	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝	x	-3806700.000	X	-3806700.000
6410	*ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8411	-3806700.000	X	-3806700.000
6420	*ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ*	8412	0.000	X	0.000
6430	*ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐՑՈՒՄԻՑ*	8413	0.000	X	
6440	*ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8414	0.000	X	

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25 -ի N243 -Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)

(հազար դրամով)

Տողի NN		Ընդամենը (ս.4+ս.5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	0.000	0.000	0.000

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25 -ի N243 -Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
8010	ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝		0.000	0.000	0.000
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, այդ թվում՝		0.000	0.0	
8110	*1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝*		0.0	0.0	0.0
8111	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության), որից		0.0	X	0.0
8112	*- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր*	9111	0.0	X	
8113	*- հիմնական գումարի մարում*	6111	0.0	X	
8120	1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և մարում), այդ թվում՝		0.0	0.0	0.0
8121	1.2.1. Վարկեր, որից՝		0.0	X	0.0
8122	*- վարկերի ստացում, որից*	9112	0.0	X	0.0
8123	*պետական բյուջեից*		0.0	X	
8124	*այլ աղբյուրներից*		0.0	X	
8130	*- ստացված վարկերի հիմնական գումարի մարում, որից՝*	6112	0.0	X	0.0
8131	*ՀՀ պետական բյուջեին*		0.0	X	
8132	*այլ աղբյուրներին*		0.0	X	
8140	*1.2.2. Փոխատվություններ, որից՝*		0.0	0.0	0.0
8141	*բյուջետային փոխատվությունների ստացում, որից՝*	9112	0.0	0.0	0.0

8142	<< պետական բյուջեից		0.0		X
8143	<< այլ համայնքների բյուջեներից		0.0		
8150	**- ստացված փոխատվությունների գումարի մարում, որից՝**	6112	0.0	0.0	0.0
8151	<< պետական բյուջեին		0.0		X
8152	<< այլ համայնքների բյուջեներին		0.0		
8160	**2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ, այդ թվում՝**		0.000	**0.0**	
8161	**2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն, որից՝ 8162+8163+8164**		0.0	X	0.0
8162	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	9213	0.0	X	
8163	- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	9213	0.0	X	
8164	- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	6213	0.0	X	
8170	**2.2. Փոխատվություններ, որից՝ 8171+8172**		0.0	**0.0**	**0.0**
8171	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	9212	0.0		
8172	- փոխատվությունների տրամադրում	6212	0.0		
8190	**2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում՝ (տող 8191+տող 8194-տող8193)**		0.000	0.000	0.000
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ, որից՝	9320	0.000	0.000	0
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝առկա պարտավորությունների նպատակներ		0.000	0.000	X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		0.000	0.000	X
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ, որից՝	9330	0.000	X	0.000
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		0.000	X	0.000
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը		0.000	X	0.000
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս		X	X	X
8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս		X		
8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում, որից՝		0.0	0.0	0.0
8199ա	ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը		0.0	X	

8200	Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, այդ թվում՝		0.0	0.0	0.0
8210	*1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝*		0.0	0.0	0.0
8211	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) , որից՝		0.0	X	0.0
8212	*- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր*	9121	0.0	X	
8213	*- հիմնական գումարի մարում*	6121	0.0	X	

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25 -ի N243 -Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Սինթետիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2000	X	X	X		ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող 2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3 100)	4687661.955	2374739.500	2312922.455
2100	01	0	0		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող 2150+տող2160+տող2170+տող2180)	2004381.900	623794.900	1380587.000
2110	01	1	0		*Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝*	1606763.900	623794.900	982969.000
2111	01	1	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	1566925.300	583956.300	982969.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական			
				4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	416452.000	416452.000	0.000
				4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	100604.300	100604.300	0.000
				4115	-Այլ վարձատրություններ	0.000	0.000	0.000
				4131	-Սոցիալական ապահովության վճարներ	0.000	0.000	0.000
				4211	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	0.000	0.000	0.000
				4212	-Էներգետիկ ծառայություններ	15000.000	15000.000	0.000
				4213	-Կոմունալ ծառայություններ	1600.000	1600.000	0.000
				4214	-Կապի ծառայություններ	3300.000	3300.000	0.000
				4215	-Ապահովագրական ծախսեր	500.000	500.000	0.000
				4221	-Ներքին գործուղումներ	100.000	100.000	
				4232	Համակարգչային ծառայություններ	3100.000	3100.000	0.000
				4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	200.000	200.000	0.000
				4234	Տեղեկատվական ծառայություններ	1000.000	1000.000	0.000
				4237	Ներկայացուցչական ծախսեր	2000.000	2000.000	0.000
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	19000.000	19000.000	0.000

				4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	600.000	600.000	0.000
				4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2000.000	2000.000	0.000
				4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	2500.000	2500.000	0.000
				4264	-Տրանսպորտային նյութեր	9000.000	9000.000	0.000
				4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	2500.000	2500.000	0.000
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4000.000	4000.000	0.000
				4823	-Պարտադիր վճարներ	500.000	500.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	880969.000	0.000	880969.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	100000.000	0.000	100000.000
				5122	- Վարչական սարքավորումներ	0.000	0.000	0.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	2000.000	0.000	2000.000
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	0.000	0.000	0.000
2122	01	2	2		Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն	0.000	0.000	0.000
2130	01	3	0		Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	0.000	0.000	0.000
2133	01	3	3		Ընդհանուր բնույթի այլծառայություններ	0.000	0.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				4231	-Վարչական ծառայություններ	0.000	0.000	0.000
				4232	Համակարգչային ծառայություններ	0.000	0.000	0.000
				4235	-Կառավարչական ծառայություններ	0.000	0.000	0.000
2150	01	5	0		Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և	0.000	0.000	0.000
	01	6	0		Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող), որից՝	437456.600	39838.600	397618.000
	01	6	1		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	437456.600	39838.600	397618.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4212	-Էներգետիկ ծառայություններ	0.000	0.000	0.000
				4213	-Կոմունալ ծառայություններ	0.000	0.000	0.000
				4115	-Այլ վարձատրություններ	2500.000	2500.000	0.000
				4221	-Ներքին գործուղումներ	1000.000	1000.000	
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	8338.600	8338.600	0.000
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	3000.000	3000.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	6000.000	6000.000	0.000
				4657	- Այլ կապիտալ դրամաշնորհներ	3000.000	3000.000	0.000
				4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	1000.000	1000.000	0.000
				4823	-Պարտադիր վճարներ	15000.000	15000.000	0.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	312618.000	0.000	312618.000

				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	60000.000	0.000	60000.000
				5122	- Վարչական սարքավորումներ	25000.000	0.000	25000.000
2200	02	0	0		ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	10000.000	10000.000	0.000
	02	2	0		Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	10000.000	10000.000	0.000
	02	2	1	4241	-Մասնագիտական ծառայություններ	0.000	0.000	0.000
	02	2	1	4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	10000.000	10000.000	0.000
2300	03	0	0		ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, այդ թվում	11000.000	11000.000	0.000
	03	2	0		Փրկարար ծառայություն, որից՝	10000.000	10000.000	0.000
	03	2	1	4841	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների և կամ վնասների վերականգնում	10000.000	10000.000	0.000
	03	3	1	4239	-Դատարաններ	1000.000	1000.000	0.000
2400	04	0	0		ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490)	-561664.545	2000.000	-563664.545
2410	04	0	0		ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝	195000.000	0.000	195000.000
	04	2	0		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	2000.000	2000.000	
	04	2	1		Գյուղատնտեսություն	2000.000	2000.000	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	2000.000	2000.000	0.000
				4729	-Այլ նպաստներ բյուջեից	0.000	0.000	0.000
2424	04	2	4		Ոռոգում	195000.000	0.000	195000.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	192000.000	0.000	192000.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.000	0.000	0.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	3000.000	0.000	3000.000
2430	04	3	0		Վառելիք և էներգետիկա, որից՝	0.000	0.000	0.000
2431	04	3	1		Քարածուխ և այլ կարծր բնական վառելիք	0.000	0.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	0.000	0.000	0.000
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	0.000	0.000	0.000
2432	04	3	2		Նավթամթերք և բնական գազ	0.000	0.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	0.000	0.000	0.000
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	0.000	0.000	0.000
2450	04	5	0		Տրանսպորտ, որից՝	3048035.455	0.000	3048035.455

2451	04	5	1		ճանապարհային տրանսպորտ	2918035.455	0.000	2918035.455
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	100000.000	0.000	100000.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2818035.455	0.000	2818035.455
				5221	- Նյութեր և պարագաներ	0.000	0.000	0.000
	04	5	5	5112	- Խողովակաշարային և այլ տրանսպորտ	130000.000	0.000	130000.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.000	0.000	
2490	04	9	0		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-3806700.000	0.000	-3806700.000
2491	04	9	1		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-3806700.000	0.000	-3806700.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
					-Հիմնական միջոցների իրացումից մուտքեր, այդ թվում	0.000	0.000	0.000
				8111	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	0.000	0.000	0.000
				8121	Շարժական գույքի իրացումից մուտքեր	0.000	0.000	0.000
					-Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր, այդ թվում՝	0.000	0.000	0.000
				8411	-Հողի իրացումից մուտքեր	-3806700.000		-3806700.000
2500	05	0	0		ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560)	489900.000	238900.000	251000.000
2510	05	1	0		*Աղբահանում, որից՝*	244900.000	238900.000	6000.000
2511	05	1	1		Աղբահանում	244900.000	238900.000	6000.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	238900.000	238900.000	0.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	6000.000	0.000	6000.000
	05	2	0		Կեղտաջրերի հեռացում՝ որից	245000.000	0.000	245000.000
	05	2	1		Կեղտաջրերի հեռացում			
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	243000.000	0.000	243000.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	2000.000	0.000	2000.000
2560	05	6	0		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից	0.000	0.000	0.000
				5121	-Տրանսպորտային սարքավորումներ	0.000	0.000	0.000
2561	05	6	1		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	0.000	0.000	0.000

					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	0.000	0.000	0.000
				5131	-Աճեցվող ակտիվներ	0.000	0.000	0.000
2600	6	0	0		ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	401070.000	201070.000	200000.000
	0	0	0		ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ	0.000	0.000	0.000
	6	1	0		Բնակարանային շինարարություն, որից՝	0.000	0.000	0.000
	6	1	1		Բնակարանային շինարարություն	0.000	0.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	0.000	0.000	0.000
2630	06	3	1		Ջրամատակարում, որից՝	87000.000	0.000	87000.000
2631	06	3	1		Ջրամատակարում	87000.000	0.000	87000.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4213	-Կոմունալ ծառայություններ	0.000	0.000	0.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	86000.000	0.000	86000.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	1000.000	0.000	1000.000
2640	6	4	0		*Փողոցների լուսավորում, որից՝*	205850.000	92850.000	113000.000
2641	6	4	1		Փողոցների լուսավորում	205850.000	92850.000	113000.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	92850.000	92850.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	110000.000	0.000	110000.000
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	3000.000	0.000	3000.000
2642	6	6	1		-Կոմունալ ծառայություններ	108220.000	108220.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	106220.000	106220.000	0.000
				4655	- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	2000.000	2000.000	
				5129	-Այլ մեքենաներ և սարքավորումներ	0.000	0.000	0.000
2800	8	0	0		ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860)	1193562.000	148562.000	1045000.000
2810	08	1	0		*Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝*	0.000	0.000	0.000
2811	08	1	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	0.000	0.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000

				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	0.000	0.000	0.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.000	0.000	0.000
	08	2	0		*Մշակութային ծառայություններ, որից՝*	106912.000	106912.000	0.000
	08	2	1		Գրադարաններ	27150.000	27150.000	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	25250.000	25250.000	0.000
				4655	- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	1900.000	1900.000	
	08	2	2		Թանգարաններ և ցուցասրահներ	0.000	0.000	0.000
2822					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
	08	2	3		Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	106912.000	106912.000	0.000
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000	0.000	0.000
2823				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	104412.000	104412.000	0.000
				4655	- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	2500.000	2500.000	
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.000	0.000	0.000
				5122	- Վարչական սարքավորումներ	0.000	0.000	0.000
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	0.000	0.000	0.000
	08	2	4		Այլ մշակութային կազմակերպություններ	14500.000	14500.000	0.000
2824					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4212	-Էներգետիկ ծառայություններ	0.000	0.000	0.000
				4213	-Կոմունալ ծառայություններ	0.000	0.000	0.000
				4214	-Կապի ծառայություններ	0.000	0.000	0.000
				4237	-Ներկայացուցչական ծախսեր	0.000	0.000	0.000
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3500.000	3500.000	0.000
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	5000.000	5000.000	0.000
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	3000.000	3000.000	0.000
				4727	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	3000.000	3000.000	0.000
				4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	0.000	0.000	0.000
2860	08	6	0		*Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)*	1045000.000	0.000	1045000.000
2860	08	6	1		Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	1045000.000	0.000	1045000.000

2861					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	330000.000	0.000	330000.000
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	715000.000	0.000	715000.000
					.....	492871.000	492871.000	0.000
					.....	492871.000	492871.000	0.000
	09	1	2		Տարրական ընդհանուր կրթություն	492871.000	492871.000	0.000
2912					.....	492871.000	492871.000	0.000
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	492871.000	492871.000	0.000
				4655	- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	7000.000	7000.000	0.000
	09	2	0		Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝	1800.000	1800.000	
2920	09	2	1		Հիմնական ընդհանուր կրթություն	1800.000	1800.000	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և	1800.000	1800.000	
	09	4	0		Բարձրագույն կրթություն՝ որից	25000.000	25000.000	
2930	09	4	1		Բարձրագույն մասնագիտական կրթություն	25000.000	25000.000	

2980	09	8	1		Կրթություն (այլ դասերին չպատկանող)	0.000	0.000	0.000
2981					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000		
3060	10	6	1		Բնակարանային ապահովում	0.000	0.000	0.000
3061					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000		
					.....	0.000		
					.....	0.000		
	10	7	0		*Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝*	69500.000	69500.000	0.000
3091					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000		
	10	9	2		Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.000	0.000	0.000
3092					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական	0.000		
					.....	0.000		
					.....	0.000		
	11	0	0		ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, այդ թվում՝	194415.800	160000.000	0.000
3100	11	1	0		*ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝*	0.000	160000.000	0.000
3110	11	1	2		ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	0.000	160000.000	0.000
3112					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.000	0.000	0.000
				4891	-Պահուստային միջոցներ, այդ թվում՝	0.000	160000.000	0.000
					.....	160000.000	160000.000	0.000

Հավելված
Նաիրի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 245-Ա որոշման

Հ/Հ	Համայնք	Բնակավայր	Հողամասի ծածկագիրը	Հողամասի չափը (հա)	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Կադաստրային արժեքը (դրամ)	Մեկնարկային արժեքը (դրամ)
1	Նաիրի	Եղվարդ	07-004-0595-0033	0.0651	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	1879763	3000000
2	Նաիրի	Եղվարդ	07-004-0224-0014	0.02194	Բնակավայրերի	Հասարակական կառ.	974531	1200000
3	Նաիրի	Եղվարդ	07-004-0360-0020	0.80746	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	54504	1500000
4	Նաիրի	Եղվարդ	07-004-0431-0010	0.512	Գյուղատնտեսական	Վարելահող ջրովի 4-րդ կարգ	606720	1500000
5	Նաիրի	Եղվարդ	07-004-0329-0018	3	Գյուղատնտեսական	Վարելահող անջրդի 4-րդ կարգ	1110000	5000000
6	Նաիրի	Զորավան	07-031-0223-0071	1.0229	Գյուղատնտեսական	Վարելահող ջրովի 3-րդ կարգ	1196793	2000000
7	Նաիրի	Քասախ	07-065-0261-0063	0.2796	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	18873	3500000
8	Նաիրի	Քասախ	07-065-0048-0044	0.01037	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	708717	1000000
9	Նաիրի	Սարալանջ	07-059-0004-0024	0.10826	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	1321855	1500000

Հաստատված
Նաիրի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 246-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՊՈՌՇՅԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Նախադպրոցական ուսումնական հաստատություն» կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գյուղ Պռոշյան, ԳԱՄ-ի փողոց, 4 շենք:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Պռոշյանի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3)ռուսերեն լրիվ՝ «Прошянский ясли-детский сад» Некоммерческая Общественная Организация

4) ռուսերեն կրճատ՝ «Прошянский ясли-детский сад» НОО .

5) անգլերենլրիվ՝ «Proshyan manger-kindergarten» Community Non-Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ «Proshyan manger-kindergarten» CNCO:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սանների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.

2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.

3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.

4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.

5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: